

ԻՆՆԵՐՈՒԹԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան լինելու 10 րոպե, կես տարեկան 6 րոպե
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են միմյանից անկախությամբ
Ոտարարությունների հիմունք են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաջօրե 10-2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Պատասխանները պետք է ուղարկվեն:
Պատասխանները համարը վերադառնում են
Խմբագրատնի քաղաքի 2 կոպեկով

„ՄԱՍԿ“ ԼՐԱԳԻՐ ԳԵՂԱՔԱՆԵՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. է. թ.

(ՏԵՄԵՐՈՐԳ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն գրքով և նոյն պրոգրամայով ԱՄՆԵՆ ՕՐ (բացի տոն և տոններին հետևող օրերից):

ՊՐՈԳՐԱՄԱՄ. I. Տեղեկանա կարգադրություններ, II Առաջնորդող յոգևածներ, III Ներքին տեսություն, IV Արտաքին տեսություն, V Խառն լուրեր, VI Հեռագրեր, VII Ֆեխետուն և Բանասիրական, VIII Յայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԵՂԱՔԱՆԵՆ 10 րոպե, կես տարեկան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3 ր., երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րոպե:

Գրվել կարելի է խմբագրություն մեջ հետևել հասցեով. Тифлисе, редакция «Маск».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱՍԻՈՒԹԻՒՆ

Ներքին տեսություն. Կարծեալ մի անգամ: Նամակ Ախալցխայից: Ներքին լուրեր. — Արտաքին լուրեր. — Թիֆլիս. Նամակ Պարսկաստանից. — Մշակի. հեռագրեր. — Յայտարարություններ. — Բառապատկան: Նամակ Ղազարից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄԵՐՈՐԳ

ԳՐԱԳՐԱՄԱՄ ՄԻ ԱՆԳԱՍՄ

Արշապ էլ քաղաքի լինի և վայելուչ չիլից ստոր ուսուսայ ուսանողներին վրա խոսելը, դարձեալ անկարելի է աչքերը խիլ և նորա չը յիշել, երբ նորա այլա կերպ բարոյական պատկերը չէ հեռանում մարդու աչքից, այլ անզգարար ճշնուն է նորա միայն և շարժում լեզուն:

Խափելով հազարաւոր ծնողների քրտինքի արդիւնքը, սպառնալով ազգի նիւթական բարօրութեան մի մասը, Ռուսաստանի հայ

ուսանող խմբում է լրբարար ազգի նրա վրա դրած բոլոր յոյսերը, խաբում է ևս իր երախտաւոր ու հարապատ ծնողին, որովհետեւ նա բնաւին չէ մտածում պատրաստ վերա իրան մտեցած մորազգի վիճակը բարձրելու և ապագան պայծառացնելու համար, այլ լոկ իր սեփական գործերը զրբստելու և փորը հաստացնելու վրա է մտածում: Ուրեմն ուսուսայ ուսանողը իր հօր չարչիական արհեստը ուսուսական ասպարիզի փոխելով, ոչնչով չէ բարձրանում չարչի ստորագոյն յատկութիւններից, այլ մնում է նոյն գարշելի և կեղտոտ և սական ինստիտուցիոնով, որոնցով նա ներս է մտել ուսուսական դռներից, որոնցով և դուրս է դալիս բժիշկների, իրաւաբանների, տեխնոլոգների, ինժեներների, ֆիզիոլոգների, պատմաբանների և բնագիտական գիտելու մով:

Ասածներին ճշմարտութիւնը տեսնուհ համար, հերիք է հենց մի փոքր ուշադրել լինել հայկական կեանքի մեջ բնոգնուր

չափերին նուիրված բարձր անձինքների վրա, համազգիւր համար թէ նոյն մեջ չը կայ գրեթէ ոչ մի անհատ, որ պատկանի ուսական շխալին. վեր առէք հիմքից՝ Սթոկհոլմից, Նապոլեոնից, վերջապէս պիտան բոլոր քիչ թէ շատ նշանուոր հասարակական գործիչներին, նոքա ամենքն էլ պատկանում են գրեթէ միայն դերմանական դպրոցին:

Իսկ ուսուսայ ուսուսականները, կապված լինելով իրանց բոլոր նպատակներով լոկ կարիքի և անձնական շահերի հետ, գտնվում են տեղուական ծառայութեան մեջ, նուիրված միայն պաշտօնական թղթերին, էլ ոչ հակում ունենալով, ոչ է միջոց զբաղվել հասարակական գործունեութեամբ: Նարեկապաշտական աստը այնչափ է կանոնում նոյն, որ օրն ի բուն մեջքը թեքած, ողնաշարը մաշելով նոքա ամեն բոպէ մտածում են մի որ և ից պաշտօնական թշուառական հաճոյանալու և նրանից շռափելի խրախոյներ ստանալու վրա, որի համար հայ կանխդատը, մագիստրոսը և դոկտորը մի բոպէ անգամ չի տատանվի հազարաւոր սոսկալի խաբիւր գաներ լարել անշահախնդիր գործողներին խանդարելու և նոյն կեանքը թունաւորելու համար: Այս այն տիպը, որ արտադրում են հայոց ազգի համար մեր բարձրագոյն ձեւաբանները, գուրս թողնելով իւրաքանչիւր տարի հարիւրաւոր անպղծ դուլներ ուսուսական ցեղոտ ինտելիգենցիայի դասը ստուարացնելու համար: Իր այս կործանիչ անիւը պտտում է անհազար մի և նոյն կարգով հաւաքելով իր թւերի մեջ աւելի և աւելի բազմաթիւ թւեր, հապա ուր պիտի հասցնէ մեզ վերջը այս կորստալից ճանապարհը: Չը լինի թէ բարոյական ու մտաւոր բարեգաւաճման...

Զուարճանալու համար ի հարկէ կարելի է ասել հետեւեալը. մի բժիշկ, մի իւրաւաբան, մի պատմաբան, եթէ ապ

րում է թիֆլիսի մեջ կամ մի այլ հայաբնակ քաղաքում, իր արհեստը բանացնելով միթէ՞նա չէ ծառայում իր ազգի օգտին: Այսպիսի խաբուսիկ և շարտապանական խօսքեր, այո, շատ կարելի է ասել միայն հենց խեղճ ազգի պատկեր աւելի ևս ծաղրելու համար, չը տեսնեք մի ճրգնա՞ծ մի տաղանդալից և նեղ օր հայոց ազգի արդեան կեանքի մեջ, երբ հենց մինը վերոյիշեալ կարիքներից հրապարակ դուրս գար ու պատշաճաւոր կերպով ձեռք մեկնէր իր ազգի կարեաց: Այո, հիւսուցութիւն, կոտորած, դարձեալ սով, դարձեալ կոտորած դալիս են ու անցնում իւրաքանչիւր օր խեղճ ազգի գլխով, բայց չենք տեսնում մի հասարակութեան մոտեցողի, մի հասարակութեան քարոզիչ, մի հասարակութեան կալար, որը լինէր վերոյիշեալ դասից: Ամեն դժուար լոպէսներում իւրաքանչիւր տաղանդալից վտանգի ժամանակ մեր մեծաթիւ ինտելիգենտներին միայն մկան ծաղկում ենք տեսնում, իսկ ասպարեզում պտտում են գաղափարի նոյն խեղճ դերսիները, նոյն չորս—հինգ հասարակական գործիչները, որոնց մի մասը պատկանում է գերմանական շխալին, իսկ միւս մասը բընաւոր հանձարին և ինքնակրթ ուղղութեան: Սա՞ է արդեօք ազգի օգտին ծառայելը մեր ստուարեամբ ինտելիգենցիայի կողմից...

Բայց մի՞թէ Պետերբուրգի և Մոսկուայի նորահաս ինտելիգենցիան (այս բառի աւանդական աւանդ) մի որ և ից պայմաններով տարբերվում է իրան նախընթացներից, որով մարդ վստահութիւն լստանայ ասել թէ, նրանք չեն լինի ազգի նոյն փուլ և անպիտան գաւախները, ինչ է կեանքի մեջ օգը ազգականոյ պիտան ուսուսայ հասարակութիւն ինտելիգենցիան: Մոսկուայի և Պետերբուրգի հայ ուսանողները թիւերը միթէ ունի որ և է գերազանցող շատ իր աժմեան ուղղութեան մեջ, որ նուրան չասել ամենանիկո՞ծ արտից: Աստուած

ԲԱՆԵՍՈՒՐԵԿԱՆ

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻՑ

Նոյեմբերի 20-ին

Հայոց բոլոր ուսուցչական շրջանը անհամբեր սպասում է գալ մանկավարժական ժողովին: Հատկապէս մշակելու կարիք ունեն մեր վարժատները: Գլխաւոր հարցերից մէկն է, թէ մենք մեր ուսուսականներին համար ինչպիսի վարժապետներ ունենք: Մենք այժմ ունենք շատ տեսակ վարժապետներ. կան բաւականին բարձր ուսուսակ վարժապետներ, կան և փորձվածներ, որոնք աւարտել են Ներսէսեան և Խալիպեան ուսուսականներում և դրանք բոլորը համաձայնելով ուսուսակ սկզբնական ուսուսականների ուսուցչների հետ, բաւականին բաւական են ներկայացնում: Բայց այս վերջին ժամանակներում մեզանում երեւում են նոր տեսակ ուսուսակներ. դրանք Ներսէսեան ուսուսականի նոր աւարտած աշակերտներն են: Ի հարկէ, դրանք զեւր չէ կարելի վարժապետներ անուանել, որովհետեւ ոչ մանկավարժութեան հետ են ծանօթ և ոչ

փորձվել միջոց են ունեցել: Բայց գործը դժուարում է: Եթէ դրանք էլ իրանց առաջվայ ընկերների պէս աշխատէին օգուտ քաղել փորձված ուսուցչներից, դրանք էլ ժամանակով օգտաւէտ անգամներ կը դառնային մեր ուսումնարանների համար: Բայց վերջին ժամանակներում Ներսէսեան ուսուսականներին աշակերտները մի ուրիշ գաղափարներով են դուրս գալիս: Ներանք երեւակայում են, որ բոլոր աշխարհի ուսումը ստացել են և շատ բարձրից նայելով հին ուսուցչիչների վրա, հետեւում են նրանց տեղերը ստանալ, չը նայելով որ իրանք ամենին պատրաստ չեն այս ծանր պաշտօնը վարելու: Նրանք պատրաստ են վերցնել այնպիսի աւարակալ դասեր, որոնց հետ բոլորովին ծանօթութիւն չունեն, և իրանց այս համարձակութեամբ շատ վրէժաններ են բերում մեր ուսուսականներին: Այս բոլորը Ներսէսեան դպրոցի սխալ դաստիարակութեան հետեւանք է: Այս դպրոցը այնպիսի գաղափարներ է տալիս իր աշակերտներին, որ նրանք բոլոր աշխարհի վրա բարձրից են նայում: Ամենին անձանօթ լինելով մանկավարժութեան հետ, նրանք մտնելով մեր ուսուսականները միշտ պղծորում են նրանց: Հատկապէս նրանցից անոնք թէ այս պ. Մանուկեանի կամ մի ուրիշ հայոց երեւելի մանկավարժի մէթօն է, աշխատում են

համոզել հոգաբարձուներին, որ դրանք գոյով այսպիսի երեւելի մանկավարժների աշակերտներ աւելի հմուտ կը լինեն, քան թէ հին փորձված և գուցէ շատ աւելի ունեալ վարժապետներ և հարկէ գտնվում են այնպիսի հոգաբարձուներ, որոնք ցանկանում են բարեկարգել իրանց ուսումնարանները մանկավարժական այլ նոր տղածոճկութոյնի օգուտով: Եւ չէ կարելի խելաւոր դատել խեղճ հոգաբարձուներին, նրանցից շատերը յափշտակվում են դրանց պերճախօսութիւններով, իսկ մեզ լաւ յայտնի է, որ մեր խեղճ ազգը շատ է սիրում կարմիր խօսքերը: Եւ յիշաւ այս պարտները այնքան գեղեցիկ խօսքերի պաշար են հանում Ներսէսեան դպրոցից, որ զը ժուար չէ դրանցից խաբվել:

Օրինակի համար նկարագրեմ մի քանի պատկերներ: Ներսէսեան ուսումնարանում վերջին ժամանակներում աւարտած աշակերտների դուրծոնեութիւնից ուսուցչական ասպարիզում:

Այս ևս մտնում է մի հայոց ուսուսական. երեւակայեցէք ձեզ մի այսպիսի տեսարան. մի ընդարձակ սենեակում նստած են մինչեւ 60 աշակերտներ. նրանց առաջ կանգնած է այս մանկավարժներից մէկը պրօֆէսորի նման և բացատրում է աշակերտներին ուսուսակ լեզուի կանոնները աչքով և ոտով, որովհետեւ խեղճ լեզուն Ներ

սէսեան ուսումնարանի ազգաբնական գաղափարներից ամենին անընդունալ է դառն օտար լեզուների համար: Նա բացի հայոց լեզուից ուրիշ լեզու չէ ուզում ճանաչել, բայց ուսուսակ լեզուի դասերից ստացած փոքր մեծ ուրախութեամբ է դրպանը դնում:

Խեղճ մարդ, հալալ լինի քո վարձը, ինչքան քրտինք տեսայ քո երեսին, երբ որ դու ուզում էիր մի բաւ քաջաբուն քո անբաղղ աշակերտներին. և երբ որ քո աշակերտներից մէկը, տեսնելով քո տանջանքը, խղճաց քեզ վրա և ինքը բացատրեց, ինչպէս դու վրաւորված պատմեցիր նրան, որովհետեւ նա խանդաւրեց քո երեսին դասախօսութիւնը:

Երբ որ այս վարժապետին ևս նկատեցի, թէ նա ինչպէս է վստահել վերցնել ուսուսակ լեզուի դասերը. նա շատ հանդարտ և փիլիսոփայական ձեւով պատասխանեց, թէ դուք լաւ ծանօթ չէք հայոց կեանքի հետ և սկսեց հաստատել, թէ մեր դպրոցներումը հայոց հոգին պահպանելու համար ուսուսակ լեզուի ուսուցչը շատ փոքր ծանօթ պէտք է լինի այս լեզուի հետ. և շատ ուրիշ բարձր մտքեր յայտնեց ինձ, բայց ամեն որ ևս ոչինչ չը հասկացայ. գուցէ դրա համար էլ հայոց կեանքի հետ մտփել ծանօթ պէտք է լինի: Եւ ահա այսպիսի մի մանկավարժ այս

սիրես, ինչ ուզում ես ասիր, միայն հայոց ազգի մէջ լոյս սփռելու և ուղղութիւն տալու վրա մի խօսիր, այդ սրբապղծութիւն է...

Բայց պիտի լինի վերջապէս մի օր, որ ուսուցչայ ուսանողութիւնը հասկանայ իր պատիւը, գնահատէ իր իսկական կոչումը ճանաչէ իր պարտաւորութիւնը դէպի ազգը և բռնէ յառաջդիմութեան այն դրօշակը, որի վրա են անկած ամբողջ ազգի աչքերը և հիմնած նորա ապագան:

Այս հարցին պիտի պատասխանէ բոցի ծնողները, մեր կարծիքով, և այն ընդհանուր ուսումնական ժողովը, որը պիտի հաւաքվի եկող տարի Թիֆլիսում մանկավարժական ձեռք և հայոց մանուկների դաստիարակութեան վրա խորհելու համար: Այս ժողովը, որի գործունէութիւնից կարող է կախված լինել համայն հայ երիտասարդութեանը նոր ուղղութիւն և նոր բարոյական պատկեր տալը, մեր կարծիքով, ի միջի այլոց պիտի աչքի առաջ ունենայ և հետեւեալ պայմանը: Հայ մանուկները, որոնք ունեն և չունեն շան միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում ուստելը, բոցի իրանց կարեւոր առարկաները անցնելուց և արհեստը սովորելուց յետո, անշուշտ կարօտ են անսխալ այնպիսի հիմնարկ պատրաստութիւն հայոց լեզուի, պատմութեան և ազգայնութեան գգնչմունքի մէջ, որով նուցա հօգին, փոխանակ ետական, նեղ և խորախալից հակումներից, կարողուհայ արմատաւորել իր մէջ աւելի վեհ, աւելի ընդհանուր և աւելի անշուշտ աւելի ընդհանուր, որով հայ մանուկի խնդիրը զգացմունք, որով հայ մանուկի միտքը և սիրտը այնչափ կարողանայ ազատվել իր հօր և մոր մտքում սահմանափակ, ստոր և ետամբ ախտերից, որ նա ընդունակ լինի մի ժամանակ ազատ կերպով, էլ առանց նախանձի, կրքի և շահամիլ շարժման բարձրանալ ընդհանուր շահերի ըմբռնման: Կարողանայ ընդունակ լինել ազգագրական ձեռնարկութիւնների մէջ հետեւել ոչ միտի դրօշակներին, այլ իր ներքին բարոյական պահանջին և անկախ ու իզգալական թելադրութեան:

Իսկ սրա համար եկող տարվայ ընդհանուր հայ ուսուցչական ժողովը, մեր կարծիքով, պիտի անշուշտ աշխատէ շատ հիմնական փոփոխութիւններ շարքում փոխել ևս, արտաքսելով միանգամ ընդ միշտ հայ ուսումնարաններից այն անբարոյականացնող, խրախուսական սխառման, որ կայաւորում է թուանշաններով երեխային զրգու-

լու մէջ: Հազար անգամ ասված է, թէ այս սխառման սպանում է երեխայի մէջ ազատ մրցելու, առանց ստոր նախանձի և շօշափելի հրապոյրներով աշխատելու հոգին: Առանց այն էլ ետամբ, բարոյապէս փչացած հայ երեխան շարունակում է այն ստորձան փշանալ ուսումնարանի մէջ, որ մինչև մադիստրոս դասնալը նա մնում է բարոյապէս նոյն դիմադիտք, որին տեսնում ենք ամենատար դասաններում:

Այսպէս թէ այնպէս, բայց ապագայ հայ երիտասարդութեան բարոյական դրութիւնը բարեփոխելու հոգսը բոցի հայ ծնողներից, գտնվում է և լիովին եկող տարվայ կովկասեան ընդհանուր հայ մանկավարժական ժողովի վրա: Աշակիւով նոր պրոգրամմա և ընտրելով աւելի վայելուչ դաստիարակութեան սխառման, հայ մանկավարժները պիտի օգնութիւն հասնեն վերջապէս այն վշտալի երեւոյթին, որով հայ ինտելլիգենցիան, ինտելլիգենցիայի վեհ յատկութիւններով փոխանակ, արտա-յայտում է այժմ միայն դիպլոմատոր կինտոնի արժանաւորութիւնները:

Գառ. Ենգուբեան

ՆԱՍՏԱԿ ԱՅԱԼՑԱՅԻՑ

26 նոյեմբեր

«Մեղու» 89 №-ում Ախալցխայի ուսումնարանների պ. պ. հոգաբարձուները յանդիման են ճշմարտութեան դէմ ելնել և զանազան տղայական սպառնալիքներով կամեցել են երկիւղ տալ «Մշակի» 193 №. նամակ Ախալցխայի յոգնաձգրի դէմ: Նախ և առաջ ասում եմ, որ իրանց կարծած անձերից ոչ մէկը չեմ, ամենին իրանց հայրը չեմ կրել և կարօտութիւն էլ չունեմ ուսուցչի: Պ. պ. հոգաբարձուները ցանկանում են, որ ես կամ փաստելով հաստատում իմ յայտնած ճշմարտութիւններս, կամ իմ խօսքը հրապարակաւ յետ կոչեմ, և ի՞նչ իրանց ցանկութիւնը չը կատարեմ, ստիպված պէտք է լինեն ինձ դատի հրաւիրել:

Ես պատրաստ եմ թէ փաստելով ապացուցանել իմ հրապարակաւ գրած ճշմարտութիւններս և թէ դատաստանի առջև մի և նոյնը կրկնել: Ինչպէս երևում է, պ. պ. հոգաբարձուները կամեցել են ինձ երկիւղ տալ դատի հրաւիրելով, ինչպէս հին կանայք վախեցնում են երեխայոց ասելով՝ փեղօք կացքը, եթէ ոչ միլին հօրը կը ձգնէր, կամ «բորբոն» կուտանք, որ ձեզ ուտէ: Ես ոչ միլին հօրէն վախեցող եմ և ոչ էլ «բորբոն» է: «Մշակի» 193 համարում գրել էի հետեւեալը: Ա) Ախալցխայի ուսումնարանների ուսուցիչները ընտրվում են կաշառով, այդ պատճառաւ նրանց մեծ մասը ուսումնարաններից արտաքսված, կամ ամենին ուսումնարանի չեմքը չը տեսած ան-

ձինք են: Ես սկզբում չը կամեցայ այդպիսի ուսուցիչներին մի առ մի թուել, որովհետեւ ես նրանց հետ գործ չունեմ, այլ վարչութեան և հոգաբարձութեան հետ: Բայց այժմ մեր հոգաբարձուները ցանկանում են, որ նրանց մի առ մի թուել, և ես էլ ահա թուել եմ: Ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան և հայոց պատմութեան ուսուցիչ պ. Գալուստ Տէր-Մկրտչեանը Ելմիածնայ Գէորգեան ձեռնարանից արտաքսված է: Հայոց լեզուի ուսուցիչ Մկրտիչ քահանայ Գահուսեանը ոչ մի ուսումնարանի չեմքը չը տեսած անձ է: Միւս բոլորն էլ թերութան են: Եթէ այսպիսով չեմք բաւականանում, դարձեալ պատրաստ եմ թուել: Ուրեմն այդպիսիները ուսուցիչ են ընտրվել կամ վարչութեան և հոգաբարձութեան կաշառելով, կամ կողմնապահներով: Հարկաւ կաշառատու ուսուցիչները երբեք չեն ասում, թէ ամենք ուսուցչութեան համար անընդունակ ենք և կաշառով ենք ընտրվել ուսուցիչ: Ասաւոր իրա թանին թիւու չէ ասում: Այդ դպրոցները յայտնվում են միայն այն ժամանակ, երբ ուսուցիչները նեղանում են հոգաբարձութիւնից, երբ նրանց հրաժարեցնում են պաշտօնից: Բ) Աշակերտաց և աշակերտուհաց թոշակները մանուկ են հոգաբարձուաց գրպանները: Եթէ այդ փողերը նրանց գրպանները չեն մանում, ապա ինչու համար կարպետեան և եղիարեթեան ուսումնարանները չեն վերանորոգում և միմայն երբ կարգացին «Մշակի» 193 №. նամակը, այն ժամանակ խորհուրդ արեցին յատակը և պատերը ներկել տալ, որպէս զի նրանց վրա նկարված ծիծաղաշար պատկերները ոչնչանան, և յետոյ սկսեցին իւրաքանչիւր ուսանողի պատկերի, որ միւս անգամ այդպիսի պատկերներ չը նկարեն: Եթէ կտնտնում են ամբողջ ուսանողներից ստորագրութիւն կը հաւաքեմ և հրապարակաւ կը յայտնեմ կարելի է, որ հոգաբարձութեան աչքերը ճշմարտութեան առջև բողբոլվում են: Մեծ ամօթ է ճշմարտութիւնը ծածկել և ուսումնարանները անձնական շահերի գոհել: Գ) Եղիարեթեան ուսումնարանի 12 տարվայ ընթացքում չընծայեց և ոչ մի սան, որ ստացած լիւնքը առաջին մրցանակ: Միթէ Ախալցխայի ան-թիւ օրիորդները մէջ չը կան գոհն երկուսը, որոնք ընդունակ լինէին առաջին վկայագիր ստանալու: Եթէ եղել են, ապա ինչից անիպեալ պ. պ. հոգաբարձուները չեն կամեցել մտադրել անել: Գ) Եղիարեթեան ուսումնարանի երբեք դատաւորութեան փակվեցաւ, չը նայելով, որ վեց աշակերտուհա համար 6000 ռուբլի ուսուցչաց ուժով տրվեցաւ: Այս բանը թէ իրանք, թէ վարչութիւնը և թէ նոյն իսկ պ. Բարսեղաւրեանը լաւ են իմանում: Բայց ինչ բանից ստիպեալ ամենուր յայտնի եղած ճշմարտութիւնները կամենում են ծածկել: Եթէ իրանք իրանց անսածին և լաճին չեն հաւատում, թող կոնսիստորիան ուղարկէ մի քննիչ, որը զայ և հաստատէ, որ երբոր դատաւորը այլ ես գոյութիւն չունի: Ե) Պարոն Գալուստ Մամուլեանը (տեսիլ եղբայրը) աշակերտուհիներին ստիպում է դասերը բերան անել և այս բանը հայրաքանութեան միջոցին ամենուր յայտնվեցաւ և նոյն

իսկ ինքը խոտորվեցաւ, որ ուսաց պատմութիւնը հարկաւոր է բերան անել: Պ. Բարսեղաւրեանին էլ այս յայտնի է, դրա համար նա նախատեց յիշեալ ուսուցչին, որը չը կարողանալով արգարանալ, 800 ռուբլ ուժովը առաւ և փախաւ Կողբ: Զ) Իւրաքանչիւր տարի վիճակային կոնսիստորիան ուղարկում է միմայն ուսուցչաց ուժով համար 3000 ռուբլ, իսկ այս տարի նրա վրա Ս. Փրկիչ եկեղեցին իր եկամուտից աւելացրեց 2500 ռուբլ և դուք դարձեալ կը գտաք, թէ Կիսրը քիչ է, չը ցոյց տալով ձեռք արդիւնները և ոչ միւր, մինչև անգամ լրացրեց ներկայացվել են նոյն իսկ պ. տեսչին, բայց տեսչը ամենին ուշք չէ դարձուցել: Դեռ տարը օր չը կայ, որ պ. Մով. Սամ. օրիորդ Սօֆիա ձարակեանին յայտնեց, որ միւս անգամ արհեստագէտ ուսուցչի մասին վատ բաներ չը գրէ պատերուն վրա: Ը) Նոր-Ալաշայի ուսումնարանի վերակացուները՝ Նրման Աղաջանեան և Պեղեքիա Մարտիրոսեան ամենին իրանց յանձնված պաշտօնը չեն վարում, այլ պարսպում են ուրիշ գործերով: Վերջիններս իրանք իրանց բերանով հաստատեցին աշակերտուհաց և մի բանի ուսուցիչներին ներկայութեամբ, պառայով, թէ չատ լաւ ենք անում, մեր գործին ոչ ոք իրաւունք չունի խառնվելու: Եթէ մեր արածը ուսումնարանի օրէնքներին հակառակ է, ինչու համար պ. տեսչը մեզ չէ յայտնում այդ, և եթէ յայտնէ, ինքն էլ է մեղաւոր, որովհետեւ միշտ ինքն էլ դատելից բացակայ է լինում: Այս բոլորն էլ հոգաբարձութեան յայտնի է, բայց դարմանում եմ, որ դեռ ես կամենում եմ, որ ապացուցներով հաստատեմ արդէն ինք ըստ ինքեան հաստատված իրողութիւնները:

Պ. պ. հոգաբարձուները խոտորեց են ինձ ցոյց տալ իրանց հոգաբարձական գործերը, թղթերը, մատենները և այլն: Իմ նպատակս չէ ցոյցանքներ քննել և դնել, քանի որ մտանալ կազմել մի դժուարին բան է: Ուսումնողներից միւրը, եթէ ապակիներից մէկը պատանձման կտուրեց, նրա հօրից փողը առնում են և յետոյ ցուցակում գրում, թէ մեր մօտ եղած փողից այս քան ծախսեցինք ապակիների համար: Այսպիսի խաղաղութիւններից յետոյ ինձ հարկաւոր չէ ցուցակներ քննել, քանի որ այդ ցուցակների ինքնակերպը նոյն մարդիկն են: Ինչպէս տեսնկերէն ասում են. «Ես զանա օճան, բողբոն ունեմ, քիմ անքիքի ետան սեան» («գողը դու, անողը դու, օճ կասէ թէ սուտ ես դու»): Մեր հոգաբարձուները «Մեղու» 89 — գրել են թէ, ուսումնարաններից արձակվող ուսուցիչները մի գէմ կուտակեցութիւն են կազմել, որ մեր կարգադրութիւնները յեղաշրջեն և իրանք էլ իրանց պաշտօնները ստանան: Գուցէ այդ բանը ճիշտ լինի, բայց ես ամենին այդ կուտակեցութեան անդամները չեմ և կարօտութիւն էլ չունեմ լինելու: Բողբոնովն ցածրագործութիւն է ալգայիսի մի բան խորհել իմ դէմ, և կարծել, թէ հայի

տարի հրաւիրված է մի մեծ հայաբնակ քաղաք բաւական մեծ ուժովով: Եւ ինչ են անում մեր թեմական տեսուչները, որ այսպիսի մարդիկ տեղ են ստանում մեր ուսումնարաններում:

Խեղճ մեր ուսումնարանները, խեղճ մեր միակ յոյս, նոր սերունդ, ահա ինչպիսի թշնամիք է ուղարկում ձեզ վրա Ներսէսեան դպրոցը:

Մի ուրիշ օրինակ. Ա...թեմի մի ուսումնարանում հրաւիրված է մի նոր ուսուցիչ, որը ուսումնի աւարտելով Ներսէսեան դպրոցում, գնացել է մի գիւղ ուսուցչի պաշտօնով և այնտեղ կատարեալագործել է ազգային դադարարները և իր ուսումը: Այս մարդը մտնելով նոր ուսուցչական խմբի մէջ, սկսել է ցոյց տալ իր ֆօկլորները: Նախ և առաջ պաշարել է թեմական տեսչին իր անցիր սովորած պերճախօսութիւններով, և զանազան պատմութիւններով Մադրիսեանի մանկավարժութեան մասին այն աստիճանին է հասցրել, որ տեսչը դարձնելով նրա վրա առանձին ուշադրութիւն, յանձնել է մի հմուտ ուսուցչի պարագրիտներն ուղղութիւն տալ: Բայց չուտով երեացել է, որ պարտք անելով թէ և մանկավարժութեան մէջ բոլորովին տգէտ:

Նրա պարագրիտները չը գիտեմ ինչ կարելի է անումանել, երեակայեցք, որ մի վարժապետ դասարանում յանկարծ թուում է մի անկիւնից

միւրը և ուղիղված զանազան երևակայական դադարներով զարմուրդի կերպով հաւաքում է: Երբ որ նրանից պահանջում են բացատրել նրա յայտնած անմարտելի մտքերը, նա այնպիսի բաներ է հնարում, որ հայի ակամաջը երբեք լաճ չէ ապացուի բաւ: Նա զորանով ուղղում է զարմացնել մնացեալ վարժապետներին, բայց որովհետեւ նրանք զօրաւ բազդից փորձված մարդիկ են լինում, չուտով են հասկանում այս պտուղի համը, և դա տեսնելով, որ իր երեակայական դադարներով բան չէ դուրս գալիս, կամայմանում է հոգեարարանների թիւնը տալ, բայց նրանց լայն թիւնը տալ էլ չէ գտնում ապահովութիւն և այժմ, ասում են, գտնել է ուսուցչական խմբի զուարճութեան ստարկաւ: Գու սիրելիս, յոյսը մի կարելի. քո բնկերները առաջարկում են քեզ նման նորերին հրաւիրել: շատ կարելի է հոգաբարձուների մէջ ազգաբարձական հոգի կը վառվի և քշելով հմուտ հին ուսուցիչներին, ձեռք պէս նոր Գոն-Բիւստներին համար տեղ կը բացանան և դուք այն ժամանակ ձեռք երեկել դպրոցից հանած երեակայական դադարները կարող էք մտցնել մեր դպրոցներում:

Այժմ խօսեմք դրանց ընկերների մասին, որոնք դեռ ես ուսանում եմ Ներսէսեան դպրո-

ցում և ժամանակով պէտք է ուսուցիչներ դառնան: Գոցանից մի քանիսին ես տեսայ այս տարի արձակուրդի ժամանակ. դրանք հազիւ կարողանալով կարգաւ և գրել, երեկել գիտականներ էին ձեռնում և կրթութեան և քաղաքականներ անելով, զանազան նիւթեր էին հաւաքում իրանց ուսուցչի լրագրի համար: Ի հարկէ ինչ նախադրութիւններ կարելի է սպասել դեռ ես խաղաշակերտներից: Զօր, դրանք լսել են, որ այժմ մեր ժողովուրդը զբաղված է ուսումնարաններով լսել են, որ զանազան գաւառական քաղաքներից զանազաններ են անում հոգաբարձութեան և վարժապետներից, չը հասկանալով, որ միշտ կայր ժողովուրդն է լինում այս անբաւականութիւնների պատճառաւ: Երկուսի ժողովուրդը տալով մի քանի հարկեր ուղղի ուսուցչին, պահանջում է նորանից, որ առաւօտեան վաղ վերկենայ, ճաշին շատ չուտի, գիշերները վաղ տուն գալ, և գլխաւորապէս ոչ մի կնոջ հետ երբեք չը խօսի: Վայ, հազար վայ այն վարժապետներ, որը կը չեղուի ժողովուրդի տուած կենսիկ այս պրոգրամից: Մի խօսքով այս կողմից այնքան վատ դրութեան մէջ են վարժապետները գաւառներում, որ հազիւ կը գտնվի մի ուրիշ պաշտօն վարժապետների պաշտօնից վատ ժողովուրդի այն դասակարգը, որ ինքը մինչև ակամա՝

ները խրված է անբարոյականութեան ցիխի մէջ, այնպիսի բաներ է պահանջում խեղճ վարժապետներից, որ բոլորովին հերքում է նրանց մարմնաւոր լինելը:

Ես ճանաչում եմ մի քաղաքի առաջնոր մարդու, որի գերդաստանը մէջ ազգապղծութիւններ է պատանել: Ուրիշները չեմ ասում, երբ որ տեսնում է մի վարժապետին մի կնոջ հետ խօսակիս, մոռանալով իր անբարոյականութիւնը, սկսում է կեղտոտել խեղճին և վարժապետ մէջ բարոյականութեան պարագրիտը մասին է խօսում: Եւ ահա այսպիսի ժողովուրդի դատողութեան վրա հիմնվելով, այս մանուկները չը հասկանալով սկսում են կեղտոտել մեր սրբութիւնները: Ի հարկէ հասկացող մարդիկ ուշադրութիւն չեն դարձնի այսպիսի յօդուածների վրա, իսկ ազգաների դատողութեանը մինք կարիք չունենք: Մենք կառավարիչներ Ներսէսեան դպրոցի վարչութեանը, եթէ նա պատուում է մեր ազգային դպրոցները, առաջին, որ աւելի զարգացին իր աշակերտներին և լաւ պատրաստի ուսուցչական ծանր պաշտօնը կատարելու համար և երկրորդը հաւակցի նոյն, որ նորա չը կեղտոտեն մեր ազգային դպրոցները:

Եւ միման մի ամբ մամուլային կրք

գիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

